

ո՞ւ միայն իրը ազդ կ'ըլլայ արդէն փոք-
ձառու ժողովոյ մեղուներուն, այլ և կը
գրգռէ կը հրապուրէ նորահաս մեղու-
ները:

Նոյնպէս կը շարցնենք, արդեօք կերակուր փնտողները յախուռն կ'երթան հանդիպածին պէս՝ թէ կը հետևին մասնաւոր նշաններու, Պ մըրիշ կը շարժէ մեղուներու պան մը շաբարախառն և հոտաւէս սկաւառակի մը ցով անուշահնու նիւթով մը. Մերձաւոր այլ և այլ տեղիր ալ կը զնէ սկաւառակներ շաբարախառն ջուրով, ոմանը միևնոյն հոտաւէս նիւթերն ունին, այլ՝ ոչ. Արդ մեղուները մի միայն և կամ գրեթէ միայն առաջին սկաւառակները կը փնտռեն:

Նոր մեղուները իրենց քթին մօտեցնելով՝
կամ աւելի իրենց բողկունեցուն մէջ հա-
ւաքելով պարող մեղուին միջոցով տարա-
ծուած հոտը՝ անվրէս այն կողմը կ'ուղղուին՝
ուսիից կու զար այն անուշահու բորբոքր:

ՏՆՏԵՑԱԿՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ. — Արդ
ինչ է նշանակութիւնը և կարեռութիւնը
բոլոր այս արդեանց՝ մեղուներուն կենաց
վրայ ճիշդ գաղափար մ'ունենալու համար։
Ենթազբենք որ թմբիները կը սկսին ծաղ-
կիլ, դիպուածով մեղու մը կը տեսնենց՝
որ ծաղիկներէ լաւ մը կը հաւաքչ առանց
յոցնութեան՝ ստամբըր մեղրով լցնելով
և կը դառնայ իր փեթակը։

Պարելով եղելութիւնը կ'իմացնէ, և նոյն ատեն ուրիշ մեղուներ իրենց յիշղութիւն մէջ կրելով թմրի ծառին բոլորումը, որ քիչ ատենէն զիրենց կը տանի ծաղկանց տեղը, կը սկսին նոր հաւաքումը. կ'երթան, կու գան, կը պարեն, մեղուներու նոր գուն դեր կը կազմեն և այսպէս կարգաւ՝ մինչև որ պատուական աղբիւրն սկսի սպառիլ և չկարենայ մեղուն առաս և դիբին աւար մ'ունենալ. Այն ատեն մեղուներուն այլ ևս մեծ երթեւկութիւնը կը դադրի և այսպէս ճշմարիտ յարաքերութիւն մը՝ կանոնաւոր և զուգակշիռ չափով՝ կը տեսնուի մեղուներուն խնդրուածքին և ծաղկարերութեան մէջ. Թմրի ծառին ծաղիկներն այնչափ կը քաղեն՝ որչափ որ օգտակար, կարեոր

և բաւական են. նոյնպէս ալ կը վարուին
ուրիշ ծաղիկներուն նկատմամբ:

ինչպէս տեսանք՝ մեղուներուն լեզուն
մարգկային լեզուին բնաւ չի նմանիր.
անոնց լեզուն տարրեր կերպով կը զառնայ
և բոլորովին տարրեր ոգուղ կ'ազդէ. ա-
նիկայ նուիրուած է բացարձակապէս մարդ-
կային ընկերութեան ու երկրին ծառայու-
թեան ու բարեկեցութեան:

Թարգմ. Հ. Ե. Սիրոսեան

ԱՅԼԵՒՈՅԼՔ

ԱՐՏԵՎԻ ՀԱՅԵՐՆԻ

ՆԵՐԿԱԾ ՎԵՐԱԿՐՈ

— 11 —

Ընդհանրապէս ո՞վ որ վերջերս ուզեւու-
րութեան առիթով պատեհ ունեցաւ Առ-
տեալի, այսինքն Տրանսիլվանիոյ Հայե-
րուն վրայօց լրագիրներու մէջ զբելո՛
շատ մը նախորդ զրոյներու բաածները
կրկնեց, և իր վերջին հետեւանց՝ կնքեց
զրած տողերը չափազանցօրէն ծանօթ
բացատրութեամբ մը՝ թէ այնտեղի Հայերը
զդրախտաբար Հայ ազգութեան համար
կորսուած կամ օտարացած պէտք է հա-
մարուին: Ալդ, ուղենորութեան մէջ եղող-
ներու քանի մը օրուան և երգեմն նոյն
իսկ քանի մը ժամուան աղեցութեան
մղումէ գոյացուած վերոյիշեալ բացատրու-
թիմն՝ բոլորովին անհիշտ կը զտնեմ ես՝
որ տասը և աւելի երկար տարիներով
այդ Հայերուն մէջ մնացեր և անոնց հետ
կենակցեր եմ, և արգարութեան պարտը
մը կը համարիմ անոնց վրայօց տարա-
ծուած այդ աննպաստ՝ չըսելու համար
սխալ հասկացողութիւնը աւզել, և ամբաս-
տանութիւնը՝ եթէ ոչ եղանել՝ այլ գէթ
մեղմել:

Բայց նախ քան այդ եղրակացութեան
հանիլս՝ կարեւոր կը համարիմ չկիտցող-
ներու համար գէթ համառօտ տեղեկու.



թիւն մը տալ անոնց անցեալ ու ներկայ վիճակին : — Առտեալի Հայերու ներկայ թիւնի յատուկ վիճակագրական տեղեկացիր մը չունինց նախքան գերբջին աղետալի պատերազմի գիտեմ որ չ . Մկրտիչ Պոտուրիան եղայրակիցս սկսաւ, և եռանդուն աշխատութիւնը շարունակեց ժամանակ՝ անոնց թիւնի վիճակափիր մը պատրաստելու, բայ կարելոյն ճշգութեամբ և ճորութեամբ, այսինքն՝ սկսաւ հետախուզել Տրանսիլվանիոյ ամէն մէկ բաղացի, աւանի և գիւղերու մէջ անզամ բնակող ազգայինները, թէ այր և թէ կին, նշանակել իւրացանչիւր անձի բնտանեաց թիւր, մանչ ու աղջիկ զաւակներուն որբանութիւնը, պաշտօննին, արուեստնին, զրադրումին, նշանաւոր ազգայիններու ալ համառօտ կենսագրութիւննին ու լուսանկարնին հաւաքել և հրատարակելու պատրաստել յատուկ գրուածով մը : Այս բազմազրազ և օգտաէտ աշխատութիւնը դազրեցաւ իր նպատակին հանելէ՝ վերջին համաշխարհական աղետալի պատերազմին պատճառով, ոչ միայն անկարելի դանալով աշխատութեան շարունակումը, այլ նաև մինչև այն պահուն գոյացած տեղեկութիւններն ալ տակնուվայ ըլլալով՝ Հայերու նորանոր տեղափոխութիւններու հետեւանքով :

Տեղացի Հայերուն աւանդական համոզում այս է՝ որ Առտեալի Հայերուն թիւը վերոյիշեալ պատերազմէն առաջ 12-15,000 անձի կը համնէր : Այս զաղթականութիւնը՝ որ զիսաւորապէս 1700ին սկիզբները Մոլդավիային, Լեհաստանին և մերձակայ զաւառներէ կազմուած էր՝ արփոփ կը բնակէր կեռլայի (Հայաբազարի), Իրաշֆալով (Եղիսաբէթուալուի), Սեպիզի և Ճիուրճովի (Ճիօրճի ՈՒնդ-Միթլոշ) բաղաբեաւաններուն մէջ : Մասնական տեղեկագիրներէ ծանօթ է արդէն թէ րուր այս Հայերը ի սկզբան վաճառականութեամբ և երկրատէրութեամբ զրադրեն, և այդ ճիւղերուն մէջ իրենց զարգացումը ծայրագոյն աստիճանի հասցընելով՝ երկրին ազգաբնակչութեան ամենա-

օգտակար և ամենահարուստ տարրը կազմեր են, ինչացի ու խոհեմ վարմունքով, ճարտար քաղաքագիտութեամբ կրցեր են թէ Մաճառներու, թէ Վալախիներու (Շւահներու, Ռումաններու) և թէ Մաքսոններու հետ ոչ միայն խաղաղութեամբ ապրիլ, այլ նաև մեծ համակրութիւնն վաստըկեր են իշխող կեստրիական և Հունգարական վարչութիւններէն, և շատ շատեր ալ ազնաւականութեան պատուի և տիտղոսներու արժանացեցի են, որոնց նացորդները ներկայիս ա սակաւաթիւ չեն : Այս Հայերը ոչ միայն տնտեսականորէն ու քաղականորէն նշանաւոր եղեր են, այլ նաև իրենց բարեպաշտութեամբ, որուն հետեւանը ու վկայ են վերոյիշեալ բաղաբաւններու մէջ կառուցուած մի մի փառաշուր և հոյակապ մայր եկեղեցիները և ուրիշ օգնական տաճարները : Հայրենիքն շատ հեռու և հայրենի երկրին հետո ունեցեած ամէն կապերէ խզուած այս հայ գաղթականութիւնը՝ աննշան ջանքեր ու զոհողութիւններ ըրած չէ՝ նաև մայրենի լեզուին պահպանութեան համար զպրոցներ ու զիմազիոններ հաստատելով, և մրցանակի զրամազգութիւններ կազմելով՝ մանչ ու աղջիկ տղայոց բարձրագոյն կրթութեան օճանդակելու և յատկապէս ալ հայ լեզուի ուսման մէջ յառաջադէմ եղող աշակերտներու, ինչպէս նաև ուրիշ զրամական բարեգործական հաստատութիւններ՝ բարի վկայուած շքաւոր աղջիկներու օժիտ հայթայթելու, աղքատներու նպաստի, որրանոցի, հիւանդանոցի և աղքատանոցի և եկեղեցիներու պահպանման վերջապէս այս օրինակելի հայ զաղթականութիւնը զանց ըրած չէ զործաղելու այն ամէն զարգացման միջոցները՝ ինչ որ ներկայիս ամենէն աւելի զարգացած ազգերը կը զործաղընի :

Ի՞նչ է ուրեմն պատճառը որ այսօր՝ անցեալին մէջ ըրած այսցան ճիգերով հանգերծ, այդ Հայ զաղթականութեան ընտանիքները (բացառութիւնները չհաշուելով) շատ համեստ տնտեսական վիճակի մը մէջ կը գտնուին, կամ ուամկօրէն ըսելով՝ հազիւ իրենց եղովը կը տապ-

կին, և թէպէտ մտաւորապէս միշտ զար-
գացած մնացեր են բարձր աստիճանի
վրայ, բայց մայրենի լեզունին գրեթէ բո-
լողութիւն կորուսեր են:

Զանազան պատճառներ ու պարագաներ գուգընթացեր են այս յեղափոխութեա առաջ բրերելու Ես հոս երկու հատ ինձի գլխաւոր երկացած պատճառ մէջ պիտի բրեմ:

Ապահեալի Հայերը քանի որ ամփոփ
ապրեր ու գործակցեր են վերոյիշեալ չորս
քաղաքաւաններուն մէջ, և զրադեր են եր-
կոտակութեամբ ու վաճառականութեամբ՝

ուրս չի հաներ : Պաշտօնեայն աւելի կամ պակաս արժէցով ամսավարձ մը կ'ընդունի, ինչպէս ուրիշ սովորական ծառաները . այդ ամսավարձը մատուցուած ծառայութեան կարևորութեան և տարիներու աշխատանքին համեմատ՝ ոտն առ ոտն կը բարձրանայ, և երջանիկ պէտք է համարի ինքզինքը պաշտօնեայ մը՝ եթէ զանազան պարագաներու բերումով իր այդ յառաջադիմութիւնը շխաֆանուի, և ծերութեան ժամանակ ընդունած ամսաթղակով կարենայ իր ընտանիքը չափով մը բարեկեցիկ վիճակի հասցընել : —Մինչդեռ երկրատէրը, վաճառականը, արուեստաւորը, և այլն, ո՛ւ և է ծառայական վիճակէ ազատ՝ իրենց իրենց տէրն են. վաստակնին տարիներու համրանքէ և մահացուցութեանը շատութենէ կախումն չունի, այլ մի միայն իրենց իիելացիութենէն ու մոթի ճարտարութենէն, որով կը յաջորդին գրեթէ միշտ ինցիրենց ծերութեան կենսաթշակն ապահովէլ, և ընտանեկան հարստութիւնն ու բարեկեցութիւնը հաստատագոյն հիմերու վրայ դնել : —Ուստի Պետական ծառայութեան հետամուտ եղող ժողովուրդ մը հետզետէ կը չքաւորի, մինչդեռ արուեստաւոր, վաճառական, երկրագործ և այլն, ժողովուրդ մը հետզետէ կը հարստանայ : Աւրիշ կերպով չէր կրնար ըլլալ նաև Առաքելի հայ ժողովրդեան . ան թողուց իր անշուը բայց ինքնազատ վիճակը, և եղաւ Պետական փառաշուը ծառայն . հետեւաբար կորմնցուց իր հարցատութիւնն ու ճոփաւէա կենացը :

Ընդհանուր աշխարհի, բայց մանաւանդ Հովնագարիոյ համար աղետալի հետևանքներ (ըսեմ փակագծի մէջ՝ այդ ամենազնիւ ազգին համար չափազանցօրէն անարդար հետևանքներ) ստեղծող զերջին ընդհանուր պատերազմի՝ զրկեց Տրանսիլվանիոյ պետական Հայ-ծառաները (Հայերու մեծամասնութիւնը) իրենց բարեգութ տիրոջ մէն, փոխանակեց Ռումանիական Պետութիւնը՝ իւրազգի պաշտօնեաներով, և պաշտօնեայ Հայերն ստիպուեցան զրեթէ ամէնն ալ թողուկ իրենց գարւոր բնակարանը,

իրական եղջանկութեան։
Եւ իրացընէ, ինչ է պետական պաշտօնութիւն մը՝ բարձրագոյն աստիճաննէն մինչև խոնարհազոյնը՝ բայց եթէ ծառայական վիճակը մը, զի այդ պաշտօնեայն Պետութեան ծառայ է, և տիրոջ մեծութիւնը անոր ծառայական վիճակը ծառայութիւնէ

և ընտանիքին հաց ճարելու համար տեղափոխութել յօշտուած փոքրիկ Հունգարիոյ մէջ, որ իր մարդասիրական և հայասէր ծանօթ զսեմ զզացումովը կը ջանայ կարելի եղածին չափ այդ հաւասարիմ պաշտօնեաները զետեղել այս կամ այն պաշտօնարանին մէջ. բայց ինչպէս կարելի է 62 գաւառուներէ՝ 14 գաւառի միայն վերածուած երկրի մը մէջ հազարաւոր իրեն ապաստանող մաճառ և հայ պաշտօնեաներուն զործ հայթայթել, — իսկ Առտեալի մէջ կամայ և կամ ակամայ մնացող Հայերը և հայ-պաշտօնեաները՝ զրկուած իրենց պաշտօնեաներէն և ապրուստ ճարելու ստիպուած՝ սկսան դարձեալ առեւտրական ասպարիզի մէջ մտնել, նորավարժ առեւտրականներ՝ զըմայ, վաքսոն և իրուան քաջափորձ առեւտրականներու մրցանքի հանդէս... Բայց վատահ եմ որ հայուն բնածիր ճարպիկութիւնը, տոկունութիւնը և խելքը՝ պիտի յաջողի հնետհետէ այդ ասպարիզին մէջ դարձեալ իրեն պատիւթերուն նախնական դիրքը ստեղծել.

Առտեալի Հայերոն պիտութեան պաշտօնեաներ դասնալու ոյս մոլութիւնուորիշ ցաւալի արդինք մ'ալ յառաջ բերած է՝ ի վաս հայ լեզուի պահպանութեան, Պաշտօնեայն՝ ինչպէս ըսի՝ ծառայ մ'է, և ծառայն պարտաւոր է իր տիրոջ կամբին համաձայն՝ իր ծառայական պարտը կատարելու համար՝ փոխադրութիւն հոն՝ ուր տէրը զինքը կ'ուզէ զետեղել; Պետական պաշտօնեայ հայը ստիպուած էր թողով վերսոյիշեալ չորս հայաբազարներէն մին կամ միւրը, և պաշտօնին պահնանջման գոհացումն տալու համար՝ փոխադրութիւն ընտանեօթ Տրանսիլվանիոյ և երբեմ ան-կէ ալ դուրս՝ այս կամ այն ստարարնակ քաղաքները, ուր կդզիացած ապրելով, զուրկ հայ զպրոցէ և հայութեան կապերէ, անկարելութեան մէջ էր իր որդիներուն հայերէն սովորեցնել, և շատ անգամ այնպէս իր սերունդը կը ձուլուէր մաճառ ժողովրդեան հետ, որ այդ սերնդեան մէջ իրը հնաւանդ յիշատակ մը միայն կը մար՝ թէ իր նախնիքը հայ են եղեր

հայերէն կը խօսին ու կը զրեն եղեր։ Ո՛՛Ռան այսպիսի ընտանիքներու հանդիպեր եմ քնաւ չսպասած տեղերուն մէջ, ուր անոնց աշըիս առջն դրեր են հայազիր յիշատականիներ և մանաւանդ հայազիր առեւտրական հաշուեգրեր, զորոնց իրը սրբազան աւանդ, իրը վերջին յարակցական կապ մը իրենց հայութեան՝ ինամքով պահեր էին ընտանեկան զիւաններու մէջ։ Զկարծուի թէ սակաւաթիւ եղած են այսպիսի անհետացած հայեր, ընդհակառակն այսօր կրնամ-ըսել չկայ Տրանսիլվանիոյ մէջ քաղաք մը, աւան մը, զիւր կամ զիւզակ մը՝ որուն մէջ չգտնուին այսպէս ցրուած ցանուած հին հայ զերպատաններ, աւելի կամ պակաս չափով մաճառացած հայեր, որ սակայն կը թոփովն է՛մ՝ ինիները հայեակ կի զրցէին։

Իսկ վերսոյիշեալ չորս հայ կեղրուներուն մէջ՝ մինչև վերջին ժամանակներս շարունակուեր է հայ լեզուի ուսումը, քանի որ յատուկ հայ զպրոցներ շարունակեր են (ինչպէս այսօր կեռայի մէջ) նոյնը տղայց աւանդելու երբ Հունգար Պիտութիւնն այդ քաղաքներուն մէջ ալ բարձրագոյն վարժարաններ կամ զիմազդիններ չիմմեր է, տեղացի Հայերն ալ աւելի կամ պակաս առատաձեռնութեամբ մաճանակեցեր են պետական ծախսիքրուն, պայմանով որ այդ զիմազդիններու մէջ հայերէն լեզուի դասաւանդութիւն ալ մոցուի Պիտութիւնն այդ պայմանին գործադրութեան համար իր պարտաւորութիւնը կատարած համարեր է՝ օրական աւանդուելիք ուսմանց ցուցակն զուրս՝ ժամանակակից որոնց մէջ հայերէն սովորի ուզողները (հայ կամ ստարազզի տղաք) իրաւունք ունին յաճախելու նշանակուած դասարանի մը մէջ և զոն հայ ուսուցչի դասերուն ներկայ զտնուելու։ Այս իրաւունքը շարունակեց՝ քանի որ Տրանսիլվանիա Հունգար Պիտութեան մասըն կազմեց. բայց վերջին 25-30 տարին ներու ընթացքին մէջ՝ շատ սակաւաթիւ էին հայերէն լեզուն սովորի ուզողները։ Հայ աշակերտներուն մեծագոյն մասը, որոնց զգուարաւ կրնային օրակարգին մէջ

պարտաւորեալ ուսումներու ծանրաբռուու թիւնը սովորիլ, սկսան անհոգանալ անոնց վրայ հայերէնն ալ սովորելու ծանրութիւնը ստանձնելու. և ծնողը ալ կամ թոյլա պահանջ և կամ բոլորովին զիշող կը գտնուէին իրենց զաւակներուն չկամութեան հանդէպ, գոհ մալով որ տղան պարտաւորեալ ըննութիւններն յաջողապէս կատարէ, ուսման ընթացքի տալի չկորունցնելով, ինչ որ իրենց ասակին կը վասէք. իսկ հայերէն չզիտանալ՝ քատնուն վասա մը չէր հասցներ. թէ և կը փափաքէին որ տղաք մայրենի լեզուն ալ սովորին, բայց այդ փափաքը փափաքի սահմանէն գորու չէր կելեր, իսկ կիսկատար հայերէն սովոր աշակերտներն ալ (որ երրեց կենցերուն մէջ այդ լեզուն գործնականօրէն կիրարէնու առիթը չունէին) երբ ուսմանց ընթացքնին աւարտէին, գործնական կեանքի գրաղումներու յաճախութեան մէջ՝ քիչ մը սովորած հայերէննին ալ կը մոռնային, կամ հազիւ անով քանի մը բառ կամ նախադասութիւն թոփովել կրնային:

Այսպէս ուրեմն ներկայիս Առատեալ մէջ մացած Հայութիւնը կը գտնուի բարեկեցիկ վիճակի նկատմամբ շատ համեստ (չսկսելու համար շքաւոր) պայմաններու մէջ, իսկ հայերէնի գիտութեան նկատմամբ՝ բոլորովին աղքատութեան մէջ, բացառութիւն կազմելով կեռլայի (Ասմոշույզարի) Հայերը, որոնց մէջ գեա հայ լեզուի դասաւանդութիւնը կը շարունակուի՝ շնորհի վիճնայի Միիթարեան Հայրերուն: - Եղիսաբեթուազուի մէջ՝ ուր հազիւ 15-20 հայ լեռտանից մացեր են հիմայ, Վենետիկ Միիթարեաններն աննպատակ զործ համարեցան իրենց հոն ունեցած Վանասունը պահել, լաւագոյն զատելով (Կիէ Կարելի Ըլլայ) նոյնը հաստատել Հունգարիոյ կեղուոնը՝ Պուտափեշտի մէջ, ուր Առատեալն նորագոյթ Հայերով ազգայիններու թիւը աճելով՝ 3000ի չափ կը հաշուուի, որոնց զորկ են բոլորովին հայածէս ցանանայէ և պարոցէ, և զանոնց ձեռք բերելու համար դիմումն ըրեր են Վենետիկի Միիթարեաններուա:

(Եարումակիլի) Հ. Աթոնաս Վ. Տիրուանա



ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՐԲԱՆՈՅՑ - ՎԱՐԺԱՐԱՆ

« ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ՓԵ. »

Գաղագիւղ 1922

Բուռն փոթորկի մը գործած աւերին մնուաթիւնը անոր հանդաստնելն վերջն է որ կը հասկցուի: Հայ ժողովուրդը իր կրած վասին անաւորթեան՝ 1917ի զննադադարին գերջըն նախամբուղջովին վերահսու եղաւ. հայանակ գիւղերու թագեր աւերուած, մը լինու. մը հայ խաղաղ ընակյութիւն, կիներ, մանուկներ ու ծերեր զարհութիւնի անգութ ենանակներով յարդուած էին: Հայութեան բեկորները անապատի աւագներուն վրայ սփոռուած էին, իսկ մաս մը փոքրիկներ՝ թրքակն որբանցներու մէջ փակուած: Զինադադարէն վերջ ամէն կոզմ անհայր ու անմայր մացած մանուկներ երեան եկան: Հայ և օտար զբուու ձեռքեր սկսան զանոնք ժողովել ու խնա-

մել. Քրթական որբանցներէն ես առնուցան հազարաոր որբեր, Անմէտ ու Մէհմէտ եղածներ՝ զարձեան կոչուեցան կեոն և կրտաչէս, Ալիչէ ու Ֆաթմա եղածներ՝ Հայկանու ու հուարդ:

Պոլիս գտնուուզ Միիթարեան վարդապետները արգէն շատ կանուխէն մեծ ջանքեր ըրի որբեր ժողովելու, բայց յարմար չենք մը գտնելու դժուարութիւնը անյազթելի եղաւ՝ հակառակ ըուր գիմումներուն: Ցեսոյ պահ մը Ազգային խնամատարութեան հետ բանակցութիւններ կատարուեցան, անոր խնամքին տակ գտնուուզ բալոր որբերուն ուշիմագոյններն ընտրելու և անոնց՝ Միիթարեան Վարչութեամբ բարձրագոյն ուսումնալու համար: Դժբախտաբար այս գեղեցիկ ծրա-